Հավելված 7
«ՀՀ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-22/23» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-22/23»

ք. Արարատ « 27 » սեպտեմբերի 2022թ.

«Արարատի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ***«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ***-ն, ի դեմս տնօրեն Գեղամ Մկրտչյանի, որը գործում է ***«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ-ի*** կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***«Արարատ համայնքի Սուրենավան, Արմաշ և Երասխ բնակավայրերի գազատարի կառուցման»*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է, **1-ին փուլի համար՝ 15-ը դեկտեմբերի 2022թ,**
2-րդ փուլի համար՝ 30-ը հունիսի 2023թ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա)Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝
3.2.1Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.
3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.
3.2.3Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.
3.2.4Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝
3.3.1Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:
3.3.2Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝
3.4.1Աշխատանքների առնվազն -20-- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:
3.4.2Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:
3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:
3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:
3.4.5Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
3.4.6Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:
3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:
3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:
3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ
4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___3___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի

միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:
4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:
4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝
1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.
2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.
3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.
4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.
5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ***334.200.000 (երեք հարյուր երեսունչորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 55.700.000 (հիսունհինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն***:
Ընդ որում՝ 1-ին փուլի ընդհանուր գինը կազմում է ***198.800.000 /հարյուր իննսունութ միլիոն ութ հարյուր հազար /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:***
2-րդ փուլի ընդհանուր գինը կազմում է ***135.400.000/հարյուր երեսունհինգ միլիոն չորս հարյուր հազար /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:***
Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:
5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է

հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:
6.2Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.3Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:
6.4Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:
6.5Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.6Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

[30.1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:
8.9Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:
8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:
8.12Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

---

[35] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի համայնքապետարան
ք. Արարատ, Շահումյան 34
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900422001264
ՀՎՀՀ 04240194
Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ
ք.Արտաշատ, Երևան-Երասխ մայրուղի 40
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Արարատ մ/ճ
ՀՀ 220013332816000
ՀՎՀՀ 04210867
տնօրեն՝ Գ. Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում նշված նախագծի նախագծում կարող են մերժվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 27 » սեպտեմբերի 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«Արարատ համայնքի Սուրենավան, Արմաշ և Երասխ բնակավայրերի գազատարի կառուցման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Ընդհա-նուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6,00	16
	Առաջին փուլ				
	Պոլիէթիլենային d-225x12.8մմ խողովակաշար				
	Հողային աշխատանքներ				
1	3-րդ կարգի գրունտի քանդում խրամուղում 0.65մ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլիցքով և տեղում հարթեցում	1000 մ³	3,89	853,24	3320,71
2	4-րդ կարգի գրունտի քանդում խրամուղում 0.65մ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլիցքով և տեղում հարթեցում	1000 մ³	5,71	1110,06	6335,61
3	3- րդ կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում	100մ³	2,62	213,50	558,79
4	4- րդ կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում	100մ³	3,84	256,13	983,07
5	Բնահողի հետլիցք բուլդոզերով	100մ³	68,03	51,19	3482,95
6	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ³	542,50	0,85	460,79
7	Ավելորդ բնահողի տեղափոխում 10կմ	տն	976,5	1,70	1658,84
	Պոլիէթիլենային խողովակ d-225x12.8մմ SDR-17.6 ՊԷ 100				
1	Խողովակների ավազե նստաշերտի պատրաստում 0.10մ և խողովակների ծածկում 0.20մ ձեռքով	մ³	3238,02	3,86	12501,38
2	Պոլիէթիլենային խողովակի d-225x12.8մմ SDR-17.6 ՊԷ 100 տեղադրում խրամուղում 9,5մթն	գծմ	9792,00	6,91	67671,10
3	Կցորդիչ d-225մմ /ներդիր տաքացվող/	հատ	130,00	32,43	4216,01
4	Անկյունակ d-225մմ /ներդիր տաքացվող/	հատ	17,00	44,40	754,79
5	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով ա/ինքնաթափերի վրա	մ³	542,50	0,85	460,79
6	Պղնձե լարի տեղադրում 2.5մմ2	100մ	97,92	4,26	417,37
7	Բացահայտիչ ժապավենի փռում	գծմ	9792,0	0,51	5017,0
8	Չկազմատվող միացություն .պոլիէթիլեն - պողպատե d=225/219 մմ	հատ	8,00	34,13	273,04
	Անցումներ Φ219x6,0մմ մետաղական խողովակներով				
1	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Φ219x6,0մմ, պնեումատիկ փորձարկումով	գմ	54,0	16,99	917,33
2	Խողովակներիի նախաներկում (грунтовка) ХС-010 гф-021	մ²	37,1	0,77	28,67
3	Խողովակներիի հակակոռոզիոն ներկում 2 անգամ	մ²	37,1	0,85	31,54
4	Գազատարի փչամաքրում	գմ	54,0	0,42	22,93
5	Չկազմատվող միացություն .պոլիէթիլեն - պողպատե d=225/219 մմ	հատ	6,0	34,13	204,78
6	Անկյունակ 219x6մմ Ծնկալ	հատ	6,0	16,99	101,93
7	Φ325x6մմ պողպատե խողովակներից պատյանի տեղադրում	գմ	4,5	25,48	114,67
8	Փոսերի քանդում 4-րդ կարգի գրունտում կողլիցք և տեղում հարթեցում	մ³	2,2	2,55	5,50
9	Բետոնե հիմնատակների պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ³	2,2	42,70	92,23
10	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից D=159x4,0մմ H=5,0 (6) մ	տ	0,55	128,10	70,05
11	Պողպատե խողովակների D=159x4,0մմ H=5,0 (6) մ	գմ	36,0	8,49	305,78

12	Կիսախողովակների տեղադրում	կգ	18,0	0,85	15,29
13	Պարոնիտի տեղադրում	կգ	1,2	0,85	1,02
14	Մետաղական թիթեղ հենարանների տակ δ=3մմ	կգ	36,0	0,68	24,46
15	Մետաղական հենարանների նախաներկում (грунтовка) ХС-010 гф-021	մ²	24,8	0,85	21,03
16	Մետաղական հենարանների հակակոռոզիոն ներկում 2անգամ	մ²	24,8	0,85	21,03
	Պողպատե Φ325x6մմ խողովակներից պատյան				
1	Φ325x6մմ պողպատե խողովակներից պատյանի տեղադրում /անցումներ հողով/	գմ	86	25,48	2191,40
2	Φ325x6մմ պողպատե պատյանի հակակոռոզիական մեկուսացում PAM տիպի ամրանավորված մածիկային ժապավենով	գմ	86	1,70	146,09
3	PAM տիպի ամրանավորված մածիկային ժապավենի արժեքը 1մ2-1,85կգ	կգ	170,48	0,85	144,80
4	Պողպատյա պատյանի ծայրերի փակում բիտումով	հատ	22,00	2,55	56,06
5	Ստուգիչ խողովակներ 32մմ	հատ	11,00	2,55	28,03
6	Ծայրապնակային միացումներ	հատ	21,00	2,55	53,51
7	Տարբերիչ նշանների տեղադրում	հատ	12,00	8,49	101,93
8	Չկազմատվող միացություն ,պոլիէթիլեն - պողպատե d=225/219 մմ	հատ	11,00	34,13	375,43
9	Φ325x6մմ պողպատե խողովակներից պատյանի տեղադրում /կամարներ/	գմ	16,50	25,48	420,44
10	ՊԷ խողովակների զոդակարերի ուլտրաձայնային ստուգում	հատ	1350,00	3,47	4690,89
11	Գազատարի փչամաքրում	գմ	9792,0	0,42	4158,56
12	Գազատարի փորձարկում	գմ	9792,0	0,42	4158,6
13	Գազատարի ներմիացում Φ150մմ	տեղ	1,00	25,48	25,48
14	Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում /անկյուն d=219մ Pe տեղադրում/	հատ	15,00	29,34	440,13
15	Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում /եռաբաշխիչ 200-110-200 Pe տեղադրում/	հատ	2,00	33,98	67,95
16	Սողնակային փականի 30с41нж1 տեղադրում 200մմ	հատ	1,00	153,66	153,66
17	Խցափակում 200մմ	հատ	1,00	33,98	33,98
	Երկրորդ փուլ				
	Պոլիէթիլենային d-225x12.8մմ խողովակաշար				
	Հողային աշխատանքներ				
1	3-րդ կարգի գրունտի քանդում խրամուղում 0.65մ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլիցքով և տեղում հարթեցում	1000 մ³	2,89	853,24	2467,53
2	4-րդ կարգի գրունտի քանդում խրամուղում 0.65մ շերեփի տարողությամբ էքսկավատորով, կողլիցքով և տեղում հարթեցում	1000 մ³	3,55	1110,06	3940,44
3	3- րդ կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում	100մ³	1,94	213,50	415,22
4	4- րդ կարգի գրունտի քանդում ձեռքով խրամուղում	100մ³	2,39	256,13	611,42
5	Բնահողի հետլիցք բուլդոզերով	100մ³	45,65	51,19	2337,26
	Պոլիէթիլենային խողովակ d-225x12.8մմ SDR-17.6 ПЭ 100			0,00	
1	Խողովակների ավազե նստաշերտի պատրաստում 0.10մ և խողովակների ծածկում 0.20մ ձեռքով	մ³	2172,90	3,86	8389,15
2	Պոլիէթիլենային խողովակի d-225x12.8մմ SDR-17.6 ПЭ 100 տեղադրում խրամուղում 9,5մթն	գծմ	6571,00	6,91	45411,23
6	Պղնձե լարի տեղադրում 2.5մմ2	100մ	65,71	4,26	280,08
7	Բացահայտիչ ժապավենի փռում	գծմ	6571,0	0,51	3366,7
8	Չկազմատվող միացություն ,պոլիէթիլեն - պողպատե d=225/219 մմ	հատ	3,00	34,13	102,39
	Անցումներ Φ219x6,0մմ մետաղական խողովակներով				
1	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից Φ219x6,0մմ, պնեումատիկ փորձարկումով	գմ	51,0	16,99	866,37
2	Խողովակներիի նախաներկում (грунтовка) ХС-010 гф-021	մ²	35,1	0,85	29,79
3	Խողովակներիի հակակոռոզիոն ներկում 2 անգամ	մ²	35,1	0,85	29,79
4	Գազատարի փչամաքրում	գմ	51,0	0,42	21,66
5	Չկազմատվող միացություն ,պոլիէթիլեն - պողպատե d=225/219 մմ	հատ	4,0	34,13	136,52
6	Անկյունակ 219x6մմ Ծնկալ	հատ	4,0	16,99	67,95
7	Φ325x6մմ պողպատե խողովակներից պատյանի տեղադրում	գմ	3,0	25,48	76,44

9	Բետոնե հիմնատակների պատրաստում հենարանների համար B12.5 դասի բետոնից	մ³	1,4	42,70	61,49
10	Հենարանների տեղադրում պողպատե խողովակներից D=159x4,0մմ H=5,0 (6) մ	տ	0,36	128,10	46,70
11	Պողպատե խողովակների D=159x4,0մմ H=5,0 (6) մ	գմ	24,0	8,49	203,85
12	Կիսախողովակների տեղադրում	կգ	12,0	0,85	10,19
13	Պարոնիտի տեղադրում	կգ	0,8	0,85	0,68
14	Մետաղական թիթեղ հենարանների տակ δ=3մմ	կգ	24,0	0,68	16,31
15	Մետաղական հենարանների նախաներկում (грунтовка) ХС-010 гф-021	մ²	16,5	0,85	14,02
16	Մետաղական հենարանների հակակոռոզիոն ներկում 2անգամ	մ²	16,5	0,85	14,02
	Պողպատե Φ325x6մմ խողովակներից պատյան	հատ	15		
1	Φ325x6մմ պողպատե խողովակներից պատյանի տեղադրում /անցումներ հողով/	գմ	116	25,48	2955,84
2	Φ325x6մմ պողպատե պատյանի հակակոռոզիական մեկուսացում PAM տիպի ամրանավորված մածիկային ժապավենով	գմ	116	1,70	197,06
3	PAM տիպի ամրանավորված մածիկային ժապավենի արժեքը 1մ2-1,85կգ	կգ	236,68	0,85	201,03
4	Պողպատյա պատյանի ծայրերի փակում բիտումով	հատ	30,00	2,55	76,44
5	Ստուգիչ խողովակներ 32մմ	հատ	15,00	2,55	38,22
6	Ծայրապնակային միացումներ	հատ	9,00	2,55	22,93
7	Տարբերիչ նշանների տեղադրում	հատ	6,00	8,49	50,96
11	Գազատարի փչամաքրում	գմ	6571,0	0,42	2790,63
12	Գազատարի փորձարկում	գմ	6571,0	0,42	2790,6
	Արմաշ համայնքի գազատարի կառուցման աշխատանքներ				
	Գազատար				
1	Փոսերի քանդում III-րդ կարգի գրունտում հենասյուների համար	խմ	5,370	3,40	18,24
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար B-7.5 դասի բետոնից	խմ	5,370	33,98	182,45
3	Հենարաններ խողովակից DH=108x3,5մմ H=5,0 (5,6)մ	տ	0,3029	42,47	12,86
4	Խողովակ DH=108x3,5մմ	գծ.մ	33,60	5,10	171,23
5	Հենարաններ խողովակից DH=89x3,5մմ H=3,0 (3,5)մ	տ	1,1608	42,47	49,30
6	Խողովակ DH=89x3,5մմ	գծ.մ	157,50	3,86	608,08
7	Ամրան Φ14 AIII-ի արժեքը	տն	0,0309	469,47	14,49
8	Կիսախողովակ	տն	0,0460	469,47	21,58
9	Գազատարի տեղադրում հենասյուների վրա փորձարկումով DH=108x4,0մմ	գծ.մ	353,00	5,41	1908,01
10	Ծնկալ Պողպատե, d=108մմ	հատ	10,00	5,10	50,96
11	Գազատարի խողովակների և հենասյուների ներկում /2 անգամ/	100 մ2	1,731	85,71	148,38
12	Գազատարի փչամաքրում	մ	353,00	0,42	149,92
13	Նախագծվող գազատարի միացում գործող գազատարին	տեղ	1,00	15,44	15,44
	Պահարանային գազակարգավորիչ կետ ՊԳԿԿ-100				
1	Գազատարի ներմիացում	տեղ	1,00	21,62	21,62
2	Անկյունակ 108x6մմ	հատ	2,00	3,40	6,80
3	Սողնակային փականի տեղադրում Dպ100 Pպ1,6 ՄՊԱ	հատ	2,00	38,61	77,22
4	Պահարանային գազակարգավորիչ կետ ՊԳԿԿ-100	կ-տ	1,00	1698,76	1698,76
5	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք և հարթեցում տեղում ՊԳԿԿ-100-ի հարթակի համար	խմ	0,700	2,55	1,78
6	Ավազի նախապատրաստական շերտի պատրաստում ՊԳԿԿ-100-ի հարթակի համար	մ³	0,50	3,86	1,93
7	Միաձույլ ե/բ բետոնե հիմքի իրականացում սարքավորումների տակ B12,5 դասի բետոնից ՊԳԿԿ-100-ի հարթակի համար	մ³	0,500	42,47	21,23
8	Φ8AI ամրանի արժեքը	տն	0,026	469,47	12,25
	Գազատարի հողանցում				
1	Փոսերի քանդում 3-րդ կարգի գրունտում կողլիցք	մ³	0,50	2,55	1,27
2	Անկյունային պողպատ 50x50x5մմ	հատ	3,00	5,95	17,84
3	Շերտապողպատ 4x40մմ	գմ	10,00	0,85	8,49

4	Կլոր պողպատ Φ12մմ	գմ	1,20	0,85	1,02
	Գազատարի պաշտպանիչ ցանց				
1	3-րդ կարգի գրունտուի մծակում ձեռքով	մ³	2,88	2,55	7,34
2	Շերտավորպողպատ 4x80 l=80	գմ	0,80	1,70	1,36
3	Անկյունային պողպատ 50x50x5մմ	գմ	3,00	2,55	7,64
4	Կլոր պողպատ в8	գմ	14,00	0,42	5,95
5	Մեկուսիչ ШПК-10	հատ	10,00	0,42	4,25
6	Ձող ШУ-20	հատ	10,00	1,70	16,99
7	Մետաղալար Ø2	տն	0,08	469,47	37,56
8	Շերտավոր պողպատ 4x40	գմ	15,00	0,85	12,74
9	Անկյունավոր պողպատ 63x63x5	գմ	9,00	3,40	30,58
	Անշարժ հենարան				
1	3-րդ կարգի գրունտուի մծակում ձեռքով	մ³	0,82	2,55	2,09
2	Բետոնե հենարանների պատրաստում В12,5 դասի բետոնից	մ³	0,820	42,47	34,82
3	Անշարժ հենարանների տեղադրում	կգ	110,00	0,85	93,43
	Սուրենավան համայնքի գազատարի կառուցման աշխատանքներ				
	Գազատար				
1	Փոսերի քանդում III-րդ կարգի գրունտում հենասյուների համար	խմ	9,210	3,40	31,29
2	Բետոնե հիմքերի պատրաստում հենարանների համար В-7.5 դասի բետոնից	խմ	9,210	33,98	312,91
3	Հենարաններ խողովակից DH=108x3,5մմ H=5,0 (5,6)մ	տ	0,3029	42,47	12,86
4	Խողովակ DH=108x3,5մմ	գծ.մ	33,60	5,10	171,23
5	Հենարաններ խողովակից DH=89x3,5մմ H=3,0 (3,5)մ	տ	2,1926	42,47	93,12
6	Խողովակ DH=89x3,5մմ	գծ.մ	297,50	3,86	1148,59
7	Ամրան Φ14 AIII-ի արժեքը	տն	0,0551	469,47	25,85
8	Կիսախողովակ	տն	0,0820	469,47	38,51
9	Գազատարի տեղադրում հենասյուների վրա փորձարկումով DH=108x4,0մմ	գծ.մ	632,00	5,41	3416,05
10	Ծնկալ Պողպատե, d=108մմ	հատ	18,00	5,10	91,73
11	Գազատարի խողովակների և հենասյուների ներկում /2 անգամ/	100 մ2	3,069	85,71	263,00
12	Գազատարի փչամաքրում	մ	632,00	0,42	268,40
13	Նախագծվող գազատարի միացում գործող գազատարին	տեղ	1,00	15,44	15,44
	Պահարանային գազակարգավորիչ կետ ՊԳԿԿ-100				
1	Գազատարի ներմիացում	տեղ	1,00	21,62	21,62
2	Անկյուն 108x6մմ	հատ	2,00	5,10	10,19
3	Սողնակային փականի տեղադրում Dպ100 Pպ1,6 ՄՊԱ	հատ	2,00	38,61	77,22
4	Պահարանային գազակարգավորիչ կետ ՊԳԿԿ-100	կ-տ	1,00	1698,76	1698,76
5	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կողլիցք և հարթեցում տեղում ՊԳԿԿ-100-ի հարթակի համար	խմ	0,700	2,55	1,78
6	Ավազի նախապատրաստական շերտի պատրաստում ՊԳԿԿ-50-ի հարթակի համար	մ³	0,50	3,86	1,93
7	Միաձույլ ե/բ բետոնե հիմքի իրականացում սարքավորումների տակ В12,5 դասի բետոնից ՊԳԿԿ-100-ի հարթակի համար	մ³	0,500	42,47	21,23
8	Φ8AI ամրանի արժեքը	տն	0,026	469,47	12,25
	Գազատարի հողանցում				
1	Փոսերի քանդում 3-րդ կարգի գրունտում կողլիցք	մ³	0,50	2,55	1,27
2	Անկյունային պողպատ 50x50x5մմ	հատ	3,00	5,95	17,84
3	Շերտապողպատ 4x40մմ	գմ	10,00	0,85	8,49
4	Կլոր պողպատ Φ12մմ	գմ	1,20	0,85	1,02
	Գազատարի պաշտպանիչ ցանց				
1	3-րդ կարգի գրունտուի մծակում ձեռքով	մ³	2,88	2,55	7,34

2	Շերտավորպողպատ 4x80 l=80	գմ	0,80	1,70	1,36
3	Անկյունային պողպատ 50x50x5մմ	գմ	3,00	2,55	7,64
4	Կլոր պողպատ Ø8	գմ	14,00	0,42	5,95
5	Մեկուսիչ ШՊК-10	հատ	10,00	0,42	4,25
6	Ձող ШУ-20	հատ	10,00	1,70	16,99
7	Մետաղալար Ø2	տն	0,08	469,47	37,56
8	Շերտավոր պողպատ 4x40	գմ	15,00	0,85	12,74
9	Անկյունավոր պողպատ 63x63x5	գմ	9,00	3,40	30,58
	Անշարժ հենարան				
1	3-րդ կարգի գրունտուի մծակում ձեռքով	մ³	0,82	2,55	2,09
2	Բետոնե հենարանների պատրաստում B12,5 դասի բետոնից	մ³	0,820	42,47	34,82
3	Անշարժ հենարանների տեղադրում	կգ	110,00	0,85	93,43
Ընդամենը					218871,64
Այդ թվում՝					
Սարքավորումներ՝					3397,52
Շինարարական աշխատանքներ՝					215474,12
13.3 % վերադիր ծախսեր					28658,06
Ընդամենը					244132,18
11 % շահույթ					26854,54
Ընդամենը					270986,72
Ամբողջը					274384,24
1,5 % ԱԱՀ					4115,76
Ընդամենը					278500,000
20 % ԱԱՀ					55700,000
Ընդամենը					334200,000

* Կապալառուն աշխատանքները կատարում է Արարատ համայնքի, **Սուրենավան, Արմաշ և Երասխ** բնակավայրերում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի համայնքապետարան
ք. Արարատ, Շահումյան 34
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900422001264
ՀՎՀՀ 04240194
Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ
ք.Արտաշատ, Երևան-Երասխ մայրուղի 40
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Արարատ մ/ճ
ՀՀ 220013332816000
ՀՎՀՀ 04210867
տնօրեն՝ Գ. Մկրտչյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
« 27 » սեպտեմբերի 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«Արարատ համայնքի Սուրենավան, Արմաշ և Երասխ բնակավայրերի գազատարի կառուցման» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	***1-ին փուլ, համաձայն 1-ին փուլի նախագծանախահաշվային փաստաթղթերի***	Պայմանագրին կից համաձայնագրի կնքման օրից	15.12.2022թ
2	***2-րդ փուլ, համաձայն 2-րդ փուլի նախագծանախահաշվային փաստաթղթերի***	1.04.2023թ կնքված համաձայնագրի համաձայն	30.06.2023թ
3			
4			
...			
ԸՆԴԱՄԵՆԸ			

Ուշադրություն. *Կապալառուի ցանկությամբ 2-րդ փուլի աշխատանքները կարող են սկսվել և ավարտվել ավելի շուտ քան սույն գրաֆիկով սահմանված ժամկետն է:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի համայնքապետարան
ք. Արարատ, Շահումյան 34
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900422001264
ՀՎՀՀ 04240194
Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ
ք.Արտաշատ, Երևան-Երասխ մայրուղի 40
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Արարատ մ/ճ
ՀՀ 220013332816000
ՀՎՀՀ 04210867
տնօրեն Գ. Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
« 27 » սեպտեմբերի 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	1-ին փուլի համար աշխատանքների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231115	**Արարատ համայնքի Սուրենավան, Արմաշ և Երասխ բնակավայրերի գազատարի կառուցման աշխատանքներ**	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	20%	40%	80%	100%	100%
			2-րդ փուլի համար աշխատանքների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			... %	... %	.. %	20%	40%	80%	100%	... %	... %	.. %	... %	... %	100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի համայնքապետարան
ք. Արարատ, Շահումյան 34
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900422001264
ՀՎՀՀ 04240194
Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ
ք.Արտաշատ, Երևան-Երասխ մայրուղի 40
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, Արարատ մ/ճ
ՀՀ 220013332816000
ՀՎՀՀ 04210867
տնօրեն՝ Գ. Մխիտարյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն